




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՐՏԱՎԱԶԴԻ ԲԵՐՆԵՑԻ

(ԶՈԼԱԽՅԱՆ)



ՀԵՔՅԱԹՆԵՐԻ ԿՈՍԿԻ ՎԱԽՋԱՆԸ



(ՄԻ ՀԵՏՎԸԾ)

891.99

Դ-56

837.83
P-56

01 JAN 2012

US 600.1	b
TIME	3AM 20
DATE	2/23

00 DEC 2011



1446

===== Ն Վ Ե Ր =====

ՏԵՔՍՏԻԼ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՈՐԱՀԱՍ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Հեղինակից



820



05 MAR 2013

24142

MOS 330 00



846

42.

* *

Ն. գյուղն իր վրոք ու նեղ փողոցներով փակում է մի բլուրի վրա, վրի հարավային կողմը բարձրանում է անտառապատ լեռների սև ու գորշ բարձրունքները, իսկ մյուս կողմից շրջապատված է ընդարձակ դաշտերով: Ամեն հողմակոծ գիշերներ, յերբ հողմերը կատաղի մրրիկ են բարձրացնում աշնան գունաթափ դաշտերում և ապա արձագանք գտնում դիմացի հնամյա քարափներում, Ն. գյուղի համար ըսկավում է լեռնային աններդաշնակ ահավոր մուգիկան: Փոքրիկ խրճիթները դողում են մրրկի թափից, ծառերը որորվում, իսկ աթարի բուրգերն ու խոտի դեղերը համբ ու լուռ մնում են իրենց վրայի քարերի ծանրութունից: Իրիկունը յերբ համբ մառախուղը իջնում է գյուղի ծռռումուն փողոցների, ցածրիկ տների և դաշտերի վրա ու գունատ կրակները, վոր մեկ-մեկ թերթում են թանձր մառախուղում, հեռվից անցնող ճամբորդին թվում է, վոր դա հեքյաթների հին աշխարհն է, քանի վոր գյուղին մոտենալու ժամանակ նա անցնում է մի ահեղի ձորով, վորի մի կողմը կանգնած են ծառերի խիտ շարքերը, իսկ մյուս կողմում վիթխարի, կարծր ժայռերը: Լավում է ծերացած ժամի զանգակի թույլ զողանջները, վորոնք զողում են և ապա կամաց կորչում անտառի և մառախլապատ դաշտերի մութ հեռունքներ:

Դիմացի բարձունքների վրա, հնամյա վանքի բեկորներ կան, ուր մարդիկ միշտ յեղնում են այդ բարձրունքները մեկ-մեկ համբուրելու ավերակների մեջ գտնվող յերկու խաչքարերը. իբրև թե ամեն հողմակոծ գիշերներ այդ ավերակների վրա յերկնքից լույս է իջնում: Այդպես է պատմում այդ գյուղի կրոնական ավանդութունը և մեր նախածանոթ Պողոս ամին: Ու այսպես Ն. գյուղն ապրում է անցյալի նախապաշարունակներով: Սակայն հավատալի և հզոր լուրեր են պլտավում, վոր շուտով, շատ շուտով հեռու քաղաքներից եկեղտրոֆիկացիան պիտի գա ցրելու Ն. գյուղի սրտի վրայից դարավոր համբ մառախուղը...

Պողոս ամին գյուղի մեջ ամենահեղինակավոր անձնավորութունն էր: Նա նշանավոր էր իր աստվածապաշտությամբ և գիտությամբ: Մոտ յերեք տարի նա ոտարության մեջ էր յեղել և ամբողջ իր կյանքը, ինչպես ինքն էր պատմում, անցկացրել էր պատերազմի արնոտ փոթորիկների մեջ: Վաղաժամ թառամած դեմքի վրա կուտակվել էին գունատ բրոնզե կնճիռները: Նրա ահեղի կաղավաճքը և ճակատի փոթերի մեջ գտնվող յերկու մեծ սպիները յուրաքանչյուր մարդու հիշեցնում էին իրենց ձորերի հեքյաթների հերոսներին, ահեղի մար-

մնով, ուժեղ և յերկար բազուկներով, մեծ քթով ու գլխով: Նրա ընտանիքը ամբողջապես բաղկացած էր յերեք հոգուց. ինքը, աղջիկը և պառավ մայրը:

Ոտաբուծյունից վերադառնալու ժամանակ իր հետ բերել էր մի պրիմուս: Ամեն անգամ յերե նրա մոտ հյուրեր ելին գալիս, նա հյուրերին զարմացնելու համար հրամայում էր վառել պրիմուսը:

Աշնան անասող մի իրիկուն էր:

Գորշ թուխապները պատել էին աշնան մուռլ արտասովոր յերկինքը: Քամու յերկաթե շառահչների հետ լավում էր զաղանների խուլ ահավոր վոռնոցը: Մերկ, տերևաթափ անտառը դողում էր դալկացած, իսկ սև, կարծր ժայռերը համր ու լուռ մնում էին իրենց դաբերի հանգստությունով:

Պողոս ամին նստած էր ողջում վառվող ոճախի կրակի առաջ՝ ծխամորճը բերանին, իսկ նրանից քիչ հեռու թախտի վրա յերկու յերկտասարգներ և մեկ յեռեսնամյա մարդ, վորոնք խոսում էին իրենց առօրյա հոգսերի ու կարիքների մասին: Բայց դրսում վոռնացող քամին նրանց առիթ տվեց խոսելու բնության, տարերքի կատաղության մասին: Պողոս ամին հաստատում էր, վոր տարերքի կատաղությունը հետևանք է աստծու բարկության, իսկ յերկու յերկտասարգները մեծ հաջողությամբ մերկացնում էին նրա ասածը:

— Տո՛ւ, դուք դեռ ջահել եք, դուք հլա ինչ եք տեսել. այս մազերիս համրանքի չափ փորձանքներ ու դուլումներ եմ տեսել և քանիքանի նեղ տեղերից ազատվել եմ աստծու անունը տալով: Հիմի դուք, ջահելներդ քիչ սև ու սպիտակ կըջոկեք հավատ ուրա՞ց եք լինում. — պատասխանեց կիսաբարկությամբ Պողոս ամին:

— Ամի, յեթե դու փորձանքներից ազատվել ես՝ դա շնորհիվ քո սրտի քաջության և մարդկային գորությանդ, ել այդտեղ աստված ինչ գործ ունի, խոսեց յերկտասարգներից մեկը:

Յերկտասարգի այդ բացատրությունը վորոշ չափով ճիշտ թվաց նրան, թե փորձանքներից ազատվել ես շնորհիվ «քո սրտի քաջության»:

— Եղ մեկը ճիշտ է, հմա առանց աստծու ել բան չի եղնի: Գերմանացու կովի ժամանակ մենք ընկանք մի ծովի մոտ. ճիշտ ըստան մի գիշեր էր. փուսը կոխել էր ծովի ափերի վրա, ջուրը հերսուած զարկվում էր քյանարի լեռ քարերին. ըման մի զարհուրելի գիշեր էր, վոր կյանքումս հեշ չեյի տեսել: Մենք յերկու ընկեր էինք՝ յես և մի ուսու. սաղ որը հաց չեյինք կերել՝ բացի ծառի պտուղներից: Մեմ ել տեսնեմ փուսի մեջ խոշոր կրակմ մլմլա կը. ընկերոջս ըսի յերթանք են կողմը, ինչ կուզե թող եղնի, մենք ու մեր կյանքից ձեռք ենք քաշել, ու գնացինք: Քանի կըմոտենայինք կրակն ավելի կըխոշորանար, ուսուի աչքերը կապուտ էր ու պզտիկ, ըտոր համար ենի լավ չեր տեսնի. յես առաջինն եյի, վոր կրակի քովը տեսա մի քանի մարդու կեր-

պարանք: Ռուսի վոտքերը դող յելավ, յես սիրտ տվի: Մենք հասանք ընտեղ. մյակյամ մի ըսե ըտոնք Գերմանու սաղառներ են յեղել, մենք խապար չենք յեղել: Մենք վոր մոտեցանք թե չե ըտոնք վեր թուան ու հարձակվան մեր վրա. յես մի կտորմ հեռու թռա թվանքս բացի, ըտոնց յերկսին զարկեցի: Են ախմախ ուսը մոլրվավ ու լեզուն կապ ընկավ: Յես տեսա վոր չի եղնի, աստված կանչեցի ու ընկա ջուրը. իրեք սահաթ տաղեքու դեմ կովելուց հետո ելի քյանար յելա: Ահա տեսիք կը՝ առաջի տեղը սիրտ եր պետք, իսկ յերկրորդ տեղը աստծու ամենակարող ոգնությունը: Բայց յերկտասարգները մեծ հանգիստությամբ և համոզեցուցիչ փաստերով ժխտում էին աստծու գոյությունը: Չկարողանալով այդ բանում Պողոս ամին համոզել յերկտասարգներին, բարկացած գոչեց:

— Տո՛ւ, դուք յելաք, վոր աշխարհը վերանա դարձավ, նա մեծ գիտեք, նա փոքր: Ու սկսեց անողոք կերպով մերկացնել ներկա կյանքն ու իրականությունը:

Յերբ վիճաբանությունը սուր բնույթ ստացավ Պողոս ամու ու յերկտասարգների մեջ, այն յեռեսնամյա մարդը, վորին այդ գյուղում Ղազար էյին կոչում և վորը խոսակցության ըտոր ժամանակ լուռ էր, դարձավ դեպի Պողոս ամին և ասավ կիսատրտում ձայնով.

— Յերկտասարգները ճիշտ են ասում: մեր անցյալի կյանքը այնքան զարհուրելի յեր ու այնքան դառնագին, վոր մենք առանց սարսափ զգալու չենք կարող հիշել: Յեթե դուք ցանկանաք յես մի իրական դեպք կը պատմեմ իմ կյանքից, վորով դուք կըտեսնեք անցյալը իր արնոտ պրոցեսների համար պիտի մեղանչե ներկայի առաջ: Յեվ Ղազարի դեմքը մի բոպելում մոռյվեց ու ճակատի վրա սղոտ կերպով նշմարվեցին անցյալի տանջանքների մութ ստվերները: Ու նա սկսեց իր անցյալի տխուր պատմությունը:

*
*
*

Որերը ծանր էյին ու մոռյլ,

Յերեկը անարե, մեռնող,

Գիշերը սառն էր դաժան,

Կրակն անզոր էր, ու մխոլ:

Կարծես կրկին իմ առաջ պատուվում և անցյալ տարիների թանձր մշուշը և յես իմ առջև տեսնում եմ աշնան գորշ մոռյլ յերկնքի տակ սև միգում հեկեկող արնոտ դիակը: Սարսափից և հիասթափումից աչքերս խփում եմ, ականջներս փակում, վոր չտեսնեմ, չլսեմ մարդկային այն զազանային արարքները, վոր այնպես ազդում են ինձ վրա...

1920 թվի աշնանն էր: Տնտեսապես ու ֆիզիկապես քայքայված մեր յերկիրը կրկին մատնվել էր պատերազմի արնոտ փոթորիկներին, ուր մարդակալան գերեզմանային կրակների մեջ մեռնում էր այդ բազմաչափ ժողովուրդը, վորի տխուր բախտը հանձնված էր վորոշելու մի խումբ անողոք մարդկանց:

Իրիկվա դեմ մեր զորախումբը անցնում եր դեպի ձակատամարտ։ Իմ հարազատ Բերնա գյուղի մոտ մենք կանգ առանք քիչ հանգստանալու։ Դյուղի ծայրում հավաքված եր մեծ բազմություն, վոր շտապել էյին տեսնելու հայրենասեր այն հզոր բանակը, վորը գնում եր կովելու իրենց և հազարների մոտալուտ վտանգի դեմ։ Յես սպայիս խնդրեցի, վոր մի քանի ռուսերով ինձ թողնի վերջին անգամ հարազատներիս մնաս բարև անելու։ Նա թույլատրեց։ Յերը յես մոտեցա հավաքված բազմության՝ ծերունի հորեղբայրս վզովս փաթաթվեց։ հայրս ու մայրս վաղուց էյին մեռել, այնպես վոր նրանց արցունքներն ու համբույրները հավիտյան խռով էյին ինձ համար։ Քիչ հեռու աթարի բուրգերի մոտ կանանց խմբերի մեջ յես տեսա նրա գունատ դեմքը... Նա նայեց ինձ։ Մեր հայացքները արշավող ճառագայթների նման իրար հանդիպեցին։ Ո՛հ, ինչքան դառնություն ու տխրություն կար այդ սե, թախծոտ աչքերում, ինչքան հոգեկան գաղտնի տանջանք... Նա յերկար չդիմացավ, շրջեց իր գեղեցիկ գլուխը։ Յես զգացի թե ինչպես արցունքի խոշոր կաթիլները հոսեցին նրա միլամաղձոտ դեմքի վրա։ Իմ սիրտը լցվեց։ Դա մեր հարևանի աղջիկ Շուշիկն էր։ Նա ինձ սիրում եր, այդ յես իմացա մեր հարևան կնոջից այն ժամանակ, յերբ յես կանչված էյի զորակոչի։

Բաժանվելու ժամանակ յես խոնարհվեցի դեպի հորեղբորս ականջը և հազիվ լսելի ձայնով շրջնացի «Ապի պաշտպանիր Շուշիկին, յես նրան սիրում եմ»։

Նա զարմացած հայացքով նայեց ինձ ու հետո մի քանի անգամ գլուխը թափահարեց ի նշան համաձայնության։ Յես խռոված սրտով հեռացա։

Բանակը շարժվեց։ Նախազգացումները ինձ այնպես էյին թվեցնում, վոր յես այլևս յերեք չպիտի տեսնեմ այդ արցունքոտ աչքերը, վորի հոգին աշխարհում ապրում եր միայն ինձ համար։ Մենք անցնում էյինք մեր սեփական արտերի միջից, ուր տասնյակ տարիներ իմ նախնիքները այդ հողերը մշակելու համար վոռոգել էյին իրենց քրտինքով։ Յեվ միթե այդ հողը այժմ պիտի ներկվի մարդկային շահագործված արյունով։ Այն ժամանակ յես չէյի մտածում ու գիտակցում, վոր մեր յերկրի նման մի ֆիզիքապես և տնտեսապես քայքայված յերկրի բախտը միմիայն կըվորոշվի դասակարգային պայքարի հաղթանակով։ Այն ժամանակ իմ մեջ վառվել եր ազգասիրական անշիջ կրակը, վորը ինձ հասցրել եր ծայր աստիճան խելագարության։ Բայց հետո, շատ հետո յես իմացա, վոր մենք մի զինք ենք յեղել մեզ իշխող բեգերի ու փաշաների ձեռքերին՝ թափելու մեր հարևան ազգերի անմեղ արյունը։

Այդ իմացա միայն այն ժամանակ, յերբ դեռ յերկրի միտղ ափերակների ու բեկորների վրա կառուցվեց Խորհրդային Հայաստանը։ Այն ժամանակ յես ժողովրդի և հայրենիքի հարազատ զինվորն էյի, վոր գնում էյի պաշտպանելու մեր մարդկային բռնադատված իրավունքները, այդպես էյին ինձ հասկացրել ու կրթել մեր արյան շահագործիչները։

Յերբ աշնան մառախլապատ իրիկունը իր հետ բերավ անձրևի դանդաղ արտասովող կաթիլները, իմ հոգում դեռ ալիկոծված ապրում եր այն գունատ աղջկա պատկերը, վոր ինձ առիթ տվեց մտածելու պատերազմի արնոտ փոթորիկների հետևանքի մասին։

Մի քանի որից հետո մենք կոտորեցինք մի քանի խաղաղ թըրքական գյուղեր, արնով ներկեցինք մեր սառն զենքերը։ Յես առաջին անգամ տեսա պատերազմի սարսափներն ու անողորմ յուզները։ Բայց յերբ մենք հանդիպեցինք տաճկական բազմահզոր բանակներին այլևս անզոր էյինք կովելու, քանի վոր զինվորների մեջ բոլշևիկյան պրոպագանդան՝ մեծ հաջողություն եր գտել և շատերն արդեն դասակարգային գիտակցություն էյին յեկել։

Մի շաբաթ հետո մեր զորախումբը կոտորված ու պարտված հետ եր նահանջում, իր յետեվ թողնելով աշնան մեզի մեջ միտղ գյուղերն ու քաղաքները։ Յես ազատ լինելով կազմալուծված բանակից, վորոշեցի՝ ինչ գնով ել վոր լինի, վերադառնալ գյուղ, տեսնել ազգականներիս ու բարեկամներս։ Բայց վորովհետև մենք հակառակ ուղղությամբ էյինք նահանջել, այնպես վոր գյուղն արդեն գտնվում եր տաճիկների ձեռքին։ Յես վճռեցի և մեծ դժվարությամբ հասա գյուղ։ Ջարհուրելի յեր իմ տեսածս պատկերը։ Վորքան մենք անողորմությամբ էյինք վարվել թըրքական գյուղերի հետ, նույնքան և նրանք մեր գյուղի հետ։ Յերբ յես դիակների վրայից կարողացա հաղիվ գյուղի մեջ տեղը յերթալ, հանկարծ տեսա ծերունի հորեղբորս, վորը մի քանի որվա մեջ բոլորովին կուցել ու սպիտակել եր։ Յես ձայն տվի, սկզբում նա կարծեց, վոր յես թշնամու զինվորներից եմ, շատ վախեցավ։ Բայց հետո ճանաչելով ծանոթ ձայնս, վազեց և ուշաթափ գիրկս ընկավ։ Յերբ նա ուշքի յեկավ յես հարցրի մեր տանեցիների մասին, նրանք, ինչպես և գյուղի բնակիչները, կեսը կոտորվել ու կեսը փախել էյին։

— Իսկ Շուշիկը, Շուշիկը, հարցրեցի խռոված ձայնով յես։

— Նրա դեակը այնտեղ Չոխկ քարի մոտ ե, հազիվ թոթովեց նա խապոտ ու խեղդված ձայնով...

... Յերբ մի քանի ժամից հետո անցնում էյինք Չոխկ քարի մոտով, տեսա արյան հետքեր նայիրյան հնամյա քարի վերա, ու ինձ այնպես թվաց վոր դա անպատված մեռնող աղջկա հոգին եր, վոր տխուր հեկեկում եր աշնանային մռայլ, մեղամաղձոտ մեղում...

Ահա յերբ ամեն անգամ հիշում եմ անցյալի տխուր հիշողությունները, իմ հոգին ատելությամբ լցվում ե դեպի այն մեծ պիշատիչ պետությունները, վորոնք իրենց լպրիշ ու սուտ որենքներով շահագործում են աղքատ ազգերի արյունը։

Յերբ Ղազարը վերջացրեց իր տխուր պատմութիւնը, Պողոս ամուսնաբաժնի սովորականից ավելի յեր մոռցնել և բարկութեան ու վրդովմունքի պողպատե կնճիռները կուտակել էյին նրա խորշում ձակատի վրա: Այդ մարդը, վորքան ընդունակ էր արհամարելու ամեն ինչ իր նախապաշարված գիտակցութեամբ, նույնքան էլ ընդունակ էր ըզգալու ուրիշների ցավն ու դառնութիւնը:

Յերիտասարդները հուզված հայացքները հանել էյին Ղազարի վրա, վորի մեջ ինչ վոր մի անսովոր փոթորիկ էր բարձրացել. անցյալի դժգոյն սովերները խաղում էյին նրա գունատ ձակատի վրա:

Դրսում քամին կրկնակի կատաղութեամբ վրոնում էր ու շատաշուտ, իսկ ոջախում մըմում էյին կրակի փոքրիկ կայծերը...

* *

... Աշխարհի մեզում կրակները մեկ մեկ,
Դալուկ գույներով փայլեցին հանգան,
Ու լուռ արտասովոր հին սերունդները նրանց հետ,
Իրենց պատրաստած դժողքում մեռան...

Անցել էյին վեց յերկար ու ձիգ խաղաղ տարիներ: Ն. գյուղի անների մեջ բարձրանում էյին նոր ձեռի շինված մաքուր ու միահարկանի շէնքեր: Դաշտում մի քանի տրակտորներ հուռում էյին միտած արորի և ծուլ յեղների փոխարեն: Նորից համր մառախուղում ծերացած ժամի զանգերը զողում են թույլ իրենց մեռնող աստծու հողի վրա: Զողորգելով անտառի ու գաշտերի մութ հեռուներին, կրկին բնութեան տարերքի աններգաշնակ ու անավոր մուլիկան: Ամեն ինչ կենդանի յե, կան ու կման, մնում են նաև սե բարձունքների վրա զըտնվող ավերակ վանքի բեկորները, ուր հաճախ նոր-նոր մարդիկ են յենում, վոչ թե համբուրելու աշնտեղի խաչքարը, այլ կարգալու նըրանց, վորպես անտիկ հնութիւններ: Ամեն ինչ կան, միայն մեռել են Պողոս ամիները, իրենց խոր-խոր ձորերի, մութ անտառների վորի հեքյաթների հետ: Յեթե նա կենդանի լինէր, վորքան պիտի հակաճառէր, ու հետո զարմանար, յեթե նրան ասեյին «Պողոս ամի, այն գետը ուր դու հաճախ լողանում էյիր ու սպանված վորսի արշունները մաքրում շորերիդ վրայից, այժմ պիտի շահագործվի ամբողջ շրջանի գյուղերին լույս մատակարարելու համար»: Նա հատուկ անտառների մութ մարդկանց, պիտի թափահարեր իր մեծ գլուխը զարմանքի կիսախառն ժպտով ու պիտի պատասխանէր.

— Դուք դեռ ջահել եք, աշխարհից բան չեք հասկնա. ըտոնք խաբերալութիւն ու յերազներ են: Ու պիտի խորոված վերցներ իր հին հրացանը, պիտի յերթար մութ անտառը ապրելու ու հավատալու իրենց խոր-խոր ձորերի, մութ անտառների վորի հեքյաթներին:

ՀՀ Ազգային գրադարան



NL0329000

СПЕЦИАЛЬНЫЙ ОТДЕЛ

24142

Շուտով տպագրութեան կը հանձնվի նույն հեղինակի
«ՄՐՐԿՎԱԾ ՀՈԳԻՆԵՐ» թիւանի 1 հատորը 400 էջ.

— ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊ. —